

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.11.2014

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Հրավիրված էր մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ուսանողների գիտելիքների ստուգման առավել արդյունավետ համակարգի ներդրման մասին /Ձեկ. Ս. Առաքելյան/
2. 2014-2015 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ /Ձեկ. Վ. Ալեքսանյան/
3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ՝

Օրակարգի առաջին կետի վերաբերյալ հանգամանալի զեկուցեց մասնաճյուղի տնօրեն Ս. Առաքելյանը: Նա արձանագրեց, որ գնալով կարևորվում է գիտելիքների ստուգման օպտիմալ համակարգի ներդրումը: Ստուգումը ոչ միայն կիսամյակի ընթացքում ուսանողի ձեռք բերած գիտելիքի հաշվետվություն է, այլև արդյունավետ ուսուցում թելադրող մեխանիզմ: Քննությունը որպես կանոն վերածվում է կիսամյակի ընթացքում դասախոսի տված նյութի՝ ուսանողի կողմից պարզ վերարտադրման: Ըստ էության ստուգվում է ուսանողի մեխանիկական հիշողությունը: Երկրորդական տեղ է տրվում ուսանողի մտածելու ունակությանը: Այս երևույթը խորհրդային բարձրագույն դպրոցի ավանդույթների շարունակությունն է: Անհրաժեշտ է կազմել այնպիսի քննատոմս, որով հնարավոր կլինի ստուգել նաև ուսանողի մտածողությունը: Որպես այդ ուղղությամբ առաջին քայլ նա առաջարկեց հանրագումարային քննության յուրաքանչյուր քննական տոմսում ներառել հինգ հարց: Հարցերից մեկը պետք է լինի մասնագիտական մենագրության քննարկում: Մենագրության ներառումը հարցատոմսում կստիպի ուսանողին կիսամյակի ընթացքում ուսումնասիրել անհրաժեշտ գրականությունը և հնարավորություն կտա ստուգել նրա մտածողությունը:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝*

Մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Մարիատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

*ՈՐՈՇԵՑԻՆ՝*

- *2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի ընթացքում մի քանի առարկաների հանրագումարային քննությունների քննական տոմսերը կազմել հինգ հարցով՝ ներառելով մասնագիտական մենագրություններ:*

*ԼՍԵՑԻՆ՝*

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Ալեքսանյանը ներկայացրեց ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները: Նշվեց, որ դրանք դեռևս ընթացքի մեջ են: Կազմվել են երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցերը: Մշակվել է նաև 2014-2015 ուստարվա առաջին քննաշրջանի ընդհանուր ժամանակացույցը: Հետագայում անպատեհ փոփոխություններից և ուղղումներից խուսափելու համար այժմ այն քննարկվում է նաև ուսանողների հետ: Զեկուցողը փաստեց, որ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականին համապատասխան մատենավարության վիճակը: Ստուգումները ցույց են տալիս, որ որոշ դասախոսների մոտ կան թերացումներ, որոնք առաջիկայում կշտկվեն: Վ. Ալեքսանյանը խոսեց նաև ֆակուլտետում իրականացված դասալսումների մասին: Դասալսումներ կատարվել են երիտասարդ դասախոսների մոտ: Արդյունքները քննարկվել են, կատարվել են եզրակացություններ:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝*

Մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Մարիատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, ուսանողներ Վ. Վանեսյանը, Դ. Քոբոբեկյանը:

*ՈՐՈՇԵՑԻՆ՝*

- *2014-2015 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը Հումանիտար գիտությունների ֆակուլտետում համարել բավարար:*

*ԼՍԵՑԻՆ՝*

Օրակարգի երրորդ կետով ֆակուլտետի դեկանը խորհրդի անդամներին ներկայացրեց Օտար լեզուների ամբիոնի ֆրանսերեն լեզվի դասախոս Միրա Կարապետյանի կազմած Ֆրանսերենի հնչյունաբանության ձեռնարկը: Տեսական դասընթացի այս ձեռնարկը ստացել է հիշյալ ամբիոնի աշխատակիցների երաշխավորությունը և պատրաստ է հրատարակության համար: Դեկանը կարևորեց ձեռնարկի դերը տվյալ մասնագիտության սովորողների համար:

Ընթացիկ հարցերից էր նաև ուսման վճարների հավաքագրման վիճակը: Այդ կապակցությամբ դեկանը հանձնարարեց ֆակուլտետի կուրսղեկներին հետևողական լինել 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վճարների հավաքագրման հարցում:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝*

Մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Մարիատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը: Վերջիններս արժևորեցին և բարձր գնահատեցին Միրա Կարապետյանի կատարած աշխատանքը՝ համարելով, որ արժանի է խրախուսանքի:

*ՈՐՈՇԵՑԻՆ՝*

- *Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ խնդրելով աջակցել Ֆրանսերենի հնչյունաբանության ձեռնարկի հրատարակության հարցում:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ.Ա. Ալեքսանյան

Ա. Ս. Ղևոնդյան